# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

---

ք. Երևան 14.02.2019թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ՍՑ-ԱՄ-2019/20**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ՝ Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ՝ Ի. Եղիազարյանի (լիազորագիր տրված՝ 31.01.2019թ.)

ՈՒսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.01.2019թ. թիվ 27/26-3/990-19 գրությամբ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1.<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) 18.01.2019թ. թիվ 01/61-575 գրության հիման վրա, 25.01.2019թ. թիվ 27/26-3/990-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝

խնդրելով նախաձեռնել «Արմես Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

## 2. «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Արմես Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Արմես Գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 31.01.2019թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

## 3. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.01.2019թ. թիվ 01/61-575 գրությամբ հայտնել է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/29» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.12.2018թ. թիվ 3 որոշմամբ 2-րդ, 17-րդ, 21-րդ և 23-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Արմես Գրուպ» ՍՊԸ-ն:

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավորության 534-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 3-րդ ենթակետով, գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետոնց պարտավորությունների առկայության վերաբերյալ 26.12.2018թ. հարցում է ներկայացրել

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, ինչպես նաև որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերությունը սահմանված ժամկետում չի ներկայացրել Կարգի 11-րդ կետով նախատեսված որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

ՀՀ կառավորության 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում»:

Հիմք ընդունելով Կարգի 19-րդ կետի 5-րդ ենթակետը, գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության ներկայացրած հայտը և գնման ընթացակարգը 2-րդ, 17-րդ, 21-րդ չափաբաժինների մասով հայտարարել է չկայացած, իսկ 23-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնկաից ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ամփոփելով վերը նշվածը, Պատվիրատուն առաջարկել է Ընկերության նկատմամբ կիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 31.01.2019թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

**4. ՍՑ-ԱՄ-2019/20 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ՍՑ-ԱՄ-2019/20 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/29» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Արմես Գրուպ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.12.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 2-րդ, 17-րդ, 21-րդ և 23-րդ չափաբաժինների մասով «Արմես Գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. «Արմես Գրուպ» ՍՊԸ-ին Eauction համակարգի միջոցով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.01.2019թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով արձանագրել է, որ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել ՀՀ կառավարության 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետով նախատեսված որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

5. Նույն արձանագրության 4-րդ կետով կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով Կարգի 19-րդ կետի 5-րդ ենթակետը, մերժել է «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի հայտը:

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.01.2019թ. թիվ 27/26-3/990-19 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 18.01.2019թ. թիվ 01/61-575 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ սույն օրենքի նպատակի և պահանջների կատարման ապահովման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված ***<u>փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը,</u>*** և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/29» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արմես Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.12.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 2-րդ, 17-րդ, 21-րդ և 23-րդ չափաբաժինների մասով «Արմես Գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

«Արմես Գրուպ» ՍՊԸ-ին Eauction համակարգի միջոցով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի հրավերի 3-րդ կետի 3.1-րդ ենթակետով սահմանվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝

1) համակարգի միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 2-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

ա. իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 3-ի.

բ. գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

գ. համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով). Ընդ որում համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից, բացառությամբ որակավորման չափանիշներին վերաբերող փաստաթղթերի, որոնք հաստատվում են կոնսորցիումի առանձին անդամների կողմից՝ համաձայն կոնսորցիումի պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության:

դ. զ. սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.01.2019թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով արձանագրել է, որ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել ՀՀ կառավարության 534-Ն որոշմամաբ հաստատված կարգի 11-րդ կետով նախատեսված որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Նույն արձանագրության 4-րդ կետով կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով Կարգի 19-րդ կետի 5-րդ ենթակետը, մերժել է «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

ՀՀ կառավորության 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ ***առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում***»:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 11-րդ կետի 3-րդ մասով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, որի հետևանքով «Արմես Գրուպ» ՍՊԸ-ն «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/29» ծածկագրով ընթացակարգի շրջանակում խախտել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած պարտավորություն, որի արդյունքում «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի հետագա մասնակցությունը նշված ընթացակարգին դադարեցվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն որոշում է կայացնում մասնակցին

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

# ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.01.2019թ. թիվ 27/26-3/990-19 գրությամբ «Արմես Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Արմես Գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**